ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

ք.Գավառ, Արծվակար փող., հեռ. (093) 19-66-68
г.Гавар ул. Аршакар тел., (093) 19-66-68
c.Gavar. st.Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ.arman-erem@mail.ru

№ 03-15/118

«10» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Ղավթյանին

«ԻՋՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով « ՀՀ Տավուշի մարզի Պտղավան համայնքի մանկապարտեզի խոհանոցի և սանհանգույցի վերանորոգում » աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 4543,72 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 2 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

Հաստատում եմ՝
«10» դեկտեմբերի 2015թ.
Տնօրեն՝

__________ Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ « *<< Տավուշի մարզի Պտղավան համայնքի մանկապարտեզի խոհանոցի և սանհանգույցի վերանորոգում»* աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու՝ <u>Տավուշի մարզպետարան</u> Նախագծող՝ <u>«ԻԶՆԱԽ» ՍՊԸ</u>

Նախագծման հիմք է ծառայում Պտղավանի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

1. Խոհանոցի փայտե դռների և պատուհանների փոխարինում մ/պլ պատուհաններով և դռներով, փայտե պատուհանագոգերի փոխարինում պլաստմասե պատուհանագոգերով: Պատերի մասնակի երեսապատում հախճասալով: Արտաքին չետերի սվաղում ց/ա շաղախով, ներքինը գաջե շաղախով: Պատերի և առաստաղի գաջե սվաղի նորոգում և ներկում լատեքսային ներկով: Միջնորմերի ամրացում պատերին մետաղական 63x63x6մմ անկյունակով: Խեցեսալի հատակների փոխարինում կերամիկական 300x300մմ սալիկներով: Ներքին ջրամատակարարում d=20մմ պոլիպրոպիլենային խողովակով, լվացարանի և երկտեղանի խոհանոցակոնքի տեղադրում:
   Պատերի և միջնորմերի անցումներում նախատեսված է պողպատե պաշտպանիչ խողովակ d=150մմ և d=50մմ տրամագծով: Ներքին և արտաքին կոյուղու ցանցի անցկացում d=50 և d=110մմ տրամագծի պոլիվինիլքլորիդե խողովակից:
   Բակում կառուցվում է ե/բ սեպտիկ հոր 1,0x1,0 h = 1,5մ ներքին չափերով և 0,2մ պատի հաստության B-15 դասի բետոնից, ամրանավորված Φ12մմ A500c ամրանով, ունի թուջե մուտք Φ560մմ տրամագծով:
   Նախատեսված է ներքին էլեկտրալուսավորության ցանցի կառուցում:
2. Սանհանգույցի միջնորմային պատերի վերակառուցում 100մմ հաստության պ/բլոկից և մետաղապլաստե միջնորմերից: Առանձնացված է մեծահասակների և երեխաների սանհանգույցները: Նախատեսված են 2 մանկական և 1 սովորական զուգարանակոնք, ինչպես նաև 2 մանկական և 1 սովորական լվացարան: Փայտե դռները փոխարինված են մ/պլ դռներով: Խեցեսալե հատակները փոխարինված են կերամիկական սալիկներով: Պատերի գաջե սվաղի նորոգում և լատեքսային ներկով, պատերի երեսապատում հախճասալով 1,5մ բարձրությամբ, կախովի առաստաղի կառուցում: Ներքին էլեկտրալուսավորության, կոյուղու և ջրամատակարարման ցանցի կառուցում:
3. Արտաքին նոր կոյուղու d=110մմ տրամագծի պոլիվինիլքլորիդե խողովակներից և ե/բ հավաքովի դիտահորի կառուցում Φ1000մմ չափի (3հատ) h=1մ խորությամբ:
   Սեպտիկ հորի կառուցում 20սմ հաստությամբ B-15 դասի ե/բետոնից

Ներկայացված է նախահաշիվ *4543,72* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, նկրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132

բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05

գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

« *ՀՀ Տավուշի մարզի Պտղավան համայնքի մանկապարտեզի խոհանոցի և սանհանգույցի վերանորոգում* » աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *4543,72* հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ Մ. Աղայան

Գլխավոր մասնագետ Ա. Գրիգորյան